ԿԱՐԾԻՔ

Լիանա Ռուբենի Պետրոսյանի՝ «Ներքաղաքական իրադրությունն Իրանում Մահմուդ Ահմադինեժադի կառավարման տարիներին (2005-2013 թթ.)» ատենախոսության վերաբերյալ Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Լիանա Ռուբենի Պետրոսյանի ատենախոսությունը նվիրված է Իրանում պահպանողական քաղաքական թևի ներկայացուցիչ Մահմուդ Ահմադինեժադի նախագահության ութամյա շրջանի քննությանը, որն ունի բավարար գիտահետազոտական հետաքրքրություն՝ հաշվի առնելով տվյալ ժամանակահատվածում դրսևորված մի շարք նոր իրողություններ:

Նախ, այդ տարիներն աչքի են ընկել Իրանի ներքին և արտաքին քաղաքական կյանքում բացառիկ լարվածությամբ, որի պատճառների բացահայտումը թույլ է տալիս ամբողջական պատկերացում կազմել ինչպես իշխող կրոնաքաղաքական վերնախավի ներկայացուցիչների միջև առաջացած հակասությունների, իսլամական կառավարման ավանդույթներում ի հայտ եկած որոշակի փոփոխությունների, այնպես էլ Իրանի ներքին և արտաքին քաղաքականության մեջ տեղ գտած մի շարք աննախադեպ երևույթների մասին: Հատկապես խոսքը վերաբերում է իրանական ազգայնականության, իսլամականության և հեղափոխական հակակայսերապաշտության գաղափարական եռամիասնությանը, որը գործնականում լավագույնս դրսևորվել է Իրանի վեցերորդ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի կառավարման ժամանակահատվածում:

Չնայած բազմաթիվ բացթողումներին և քաղաքական սխալ հաշվարկներին՝ հարկ է նշել, որ նախագահ Մահմուդ Ահմադինեժադին հաջողվել է իսլամական կառավարման համակարգի հաստատուն բաղադրիչ դարձնել իրանական ազգայնականությունը: Դա, անշուշտ, պետք է դրական համարել իրանական հասարակության կյանքում՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ Մահմուդ Ահմադինեժադ քաղաքական գործչի շնորհիվ ի վերջո «միս և արյուն» են ստացել տարիներ շարունակ հասարակական մտածողության և

խոսույթի մեջ դրսևորված ազգայնական շեշտադրումները: Միաժամանակ, կոտրվել է այն կարծրատիպը, համաձայն որի՝ հնարավոր չէ համատեղել ազգայնականությունն ու իսլամական գաղափարախոսությունը:

Ատենախոսության ներածության մեջ հեղինակը կարողացել է հիմնավորել ընտրված թեմայի արդիականությունը, մեթոդաբանական առանձնահատկությունները, ներկայացնել օգտագործված աղբյուրների համառոտ տեսությունը: Աշխատանքի հիմքում դրվել են քննական և վերլուծական մեթոդները, որոնց ընտրությունը պայմանավորված է սույն հետազոտության համար դրանց կիրառելիության անհրաժեշտությամբ:

Ուշադրության է արժանի հեղինակի կողմից իրանցի և օտարազգի գիտնականների տեսակետների համադրումը, համեմատությունը և արտահայտած անհամաձայնությունն այս կամ այն մոտեցմանը, որն արվել է հնարավորինս համոզիչ:

Խնդրո առարկա թեմայի վերաբերյալ հրատարակված աշխատությունների, զանգվածային լրատվամիջոցների տարաբնույթ հրապարակումների, ելույթների և հայտարարությունների վերլուծության արդյունքում ատենախոսը կարողացել է համակողմանի քննության ենթարկել Մահմուդ Ահմադինեժադի նախագահության տարիների սոցիալ-քաղաքական, տնտեսական իրադրությանը, «Կանաչ շարժմանը», համակարգային փոփոխություններին ուղղված քաղաքականությանը, միջուկային հիմնախնդրին, մարդու իրավունքների պաշտպանությանը, էթնիկ հիմնահարցերին, ինչպես նաև Իրանի հայ համայնքին և Հայոց ցեղասպանության խոսույթին առնչվող կարևոր խնդիրներ: Միաժամանակ, հեղինակը կարողացել է վեր հանել նախագահի ու նրա գաղափարակիցների գործունեությամբ պայմանավորված մի շարք բացթողումներ, որոնք հանգեցրել են 2009 թվականի հետընտրական զարգացումներին:

Աշխատանքի շահեկան կողմերից է այն, որ հեղինակն առանձին ենթագլուխների շրջանակներում քննության է վերցրել Իրանի միջուկային հիմնահարցն ու էթնոքաղաքական հիմնախնդիրները: Հուսանք, որ այդ համատեքստում առաջ քաշված

հարցադրումները հետագայում կլրացվեն և կստանան առավել ամբողջական տեսք ատենախոսի ապագա աշխատանքներում:

«Եզրակացություններ» բաժնում ներկայացվել են հետազոտության՝ տեսական և կիրառական առումով նորույթ հանդիսացող հիմնական արդյունքները: Դրույթներից յուրաքանչյուրն, ըստ էության, աշխատանքի համապատասխան բաժնի եզրահանգումն է, ինչն, անշուշտ, ընդգծում է ատենախոսության՝ ճիշտ նպատակին ծառայելու հանգամանքը:

Բարձր գնահատելով Լիանա Ռուբենի Պետրոսյանի կողմից կատարված աշխատանքը՝ այնուամենայնիվ կցանկանայինք հեղինակի ուշադրությունը հրավիրել որոշ դիտարկումների վրա.

1. Որոշակի անորոշություն կա՝ կապված այն հարցի հետ, թե ի վերջո ի՞նչ գաղափարներ և սկզբունքներ է դավանել Մահմուդ Ահմադինեժադ քաղաքական գործիչը: Հեղինակը մի տեղ նշում է, որ «Մահմուդ Ահմադինեժադն աշխարհիկ նախագահ է, որն իր պաշտոնավարման տարիներին փորձում էր փոխել իսլամական կառավարման բնույթը՝ ձգտելով այն վերածել աշխարհիկ հանրապետության» (էջ 8), մեկ այլ տեղ նշում է, որ «Մահմուդ Ահմադինեժադը ծայրահեղական գաղափարներով քաղաքական գործիչ էր, բայց պատրաստ էր դա փոխել հոգևոր իշխանության նկատմամբ իր հավատարմությամբ» (էջ 20): Միաժամանակ, հեղինակի կողմից Մահմուդ Ահմադինեժադը ներկայացվում է որպես ազգայնական գործիչ, որը ձգտում է համադրել աշխարհիկ իշխանությունն իսլամական կառավարման համակարգի հետ (էջեր 21 և 60):

2. Խոսելով 2009 թ. հետընտրական զարգացումների մասին՝ հեղինակը նշում է, որ «անկախ սոցիալ-քաղաքական ու տնտեսական դժվարություններից՝ երկրում արմատական քաղաքական փոփոխությունների միտում չկար» (էջ 82): Կարծում ենք՝ դա իրավիճակի այնքան էլ սթափ գնահատական չէ, քանի որ «Կանաչ շարժումն», աստիճանաբար թափ հավաքելով, փոխակերպվում էր

հեղափոխական շարժման: Այդ են վկայում շարժման մասնակիցների վարքագիծն ու ընտրած կարգախոսները, որոնք օրըստօրե դառնում էին առավել ազդեցիկ, արմատական և հեղափոխական: Օրինակ, հնչել են հետևյալ կարգախոսները՝ «Բռնություն, հանցագործություն, մահ այս կրոնապետությանը» կամ «Անկախություն, ազատություն, իրանական հանրապետություն» և այլն:

3. Խոսելով Իրանի քրդաբնակ շրջանների տնտեսապես հետամնաց լինելու մասին՝ հեղինակը փորձում է դրա պատճառները փնտրել շահի ժամանակաշրջանում (էջ 136), մինչդեռ աշխատանքն առավել կշահեր, եթե քննության առարկա դառնային Իսլամական հեղափոխությունից հետո տեղի ունեցած զարգացումները, որոնց համապարփակ հետազոտությունն էլ թույլ կտար ամբողջական պատկերացում կազմել Մահմուդ Ահմադինեժադի կառավարման տարիներին տիրող իրադրության վերաբերյալ:

Չնայած վերը նշված դիտարկումներին՝ կարծում ենք, որ Լիանա Ռուբենի Պետրոսյանի սույն աշխատանքը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջներին, իսկ հեղինակը արժանի է պատմական գիտությունների թեկնածուի՝ իր հայցած աստիճանին:

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս
պ.գ.թ. Ռուդիկ Ֆելիքսի Յարալյան՝

21.06.2022 թ.

ԵՊՀ գիտքարտուղար Մ. Հովհաննիսյան